ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

20 դեկտեմբերի, 1997թ. **ք. Երեւան**

Դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետական կուսակցության 4-րդ արտահերթ համագումարը, որի աշխատանքներին մասնակցելու համար գրանցվել է 93 պատգամավոր:

Համագումարի մասնակիցները լռությամբ հարգեցին ՀՀԿ հիմնադիր, առաջին նախագահ Աշոտ Նավասարդյանի հիշատակը:

Առաջարկվեց ընտրել նախագահություն հետևյալ կազմով.

Անդրանիկ Մարգարյան, Գալուստ Սահակյան, Յուրի Բախշյան: Նախագահող ընտրվեց Գ. Սահակյանը:

Կուսակցության 4-րդ համագումարն առաջարկեց հաստատել հետեւյալ օրակարգը.

- ***ՀՀԿ նախագահի հաշվետու զեկուցում անցած ժամանակաշրջանում կուսակցության գործունեության և ներկա իրավիճակի վերաբերյալ***
- ***ՀՀԿ խորհրդի նախագահի հաշվետու զեկուցում***
- ***ՀՀԿ կանոնադրության (ծրագրի) փոփոխությունների ներկայացում***
- ***ՀՀԿ կանոնադրության (ծրագրի) փոփոխությունների հաստատում***
- ***ՀՀԿ նախագահի ընտրություն***
- ***ՀՀԿ նախագահի ելույթ***

Ողջույնի խոսքով հանդես եկան ԱԺ նախագահ Բ. Արաքցյանը, ՊՆ նախարար Վ. Սարգսյանը, Ա. Արշակյանը, Վ. Խաչատրյանը:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՑՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

ԱԺ-ի անունից ողջունելով ՀՀԿ 4-րդ համագումարի աշխատանքը, ուզում եմ նշել, որ Հանրապետական կուսակցությունը առաջին օրվանից եղել է այն սուբյեկտներից մեկը, որը պաշտպանել է հայոց պետականության ստեղծման գաղափարը: Այն մարդիկ, որ համախմբված են եղել կառույցի շուրջ, մինչև անկախ կուսակցություն դառնալը արել են շատ լուրջ գործ, և ես այստեղ պետք է նշեմ Աշոտ Նավասարդյանի անունը, որը կարողացավ համախմբել իր շուրջը մարդկանց, որոնք նվիրյալ էին պետականության ստեղծմանը: Մի կողմ դրվեցին բոլոր նեղ կուսակցական շահերը և համախմբվեցին այն գաղափարի շուրջ, որը ի սպաս էր դրվում անկախ պետականության կայացմանը:

Պետության կայացման առաջին փուլում ուզում եմ մատնանշել մի շատ կարևոր փաստ, որ ի սկզբանե Հանրապետական կուսակցությունն էր, որ հասկացավ պետական կառույցների դերը: Սա շատ կարևոր հանգամանք է, որից չկարողացան ձերբազատվել շատ քաղաքական կուսակցություններ: Հանրապետական կուսակցությունը լծվեց այն ծանր աշխատանքին, որ պետք էր պետականության կայացման համար:

Ես կարծում եմ, որ այս համագումարը իր ընդունած որոշումներով կմնա հավատարիմ այն սկզբունքներին, որ որդեգրել էին Աշոտ Նավասարդյանի կենդանության օրոք:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Քանի որ Հանրապետական կուսակցությունը պետության կայացման առաջին օրվանից կանգնած է եղել բանակի ստեղծման կողքին, ես ուզում եմ մի քանի փաստեր արձանագրել: Դեռ 1989թ., երբ չկար բանակը, կռվի առաջին օրվանից, Երասխավանից Հանրապետական կուսակցությունը այդ կռիվը արեց իրենը, և «Անկախության բանակը» ներգրավվեց այդ կռվի մեջ: Երբ կազմավորվում էր Հայոց ազգային բանակը, Գերագույն Խորհրդի ձևավորումից 2 օր հետո ձեր խորհուրդը կոչ արեց միավորվել և ենթարկվել Ազգային իշխանությանը: Հանրապետական կուսակցությունը, «Անկախության բանակը» առաջին օրինակը ցույց տվեց և դարձավ Ազգային բանակի ձևավորման առաջամարտիկը:

Երբ բանակը արդեն կայացել էր, 1992-1993թթ. բազմաթիվ հաջողություններից հետո մենք նաև ծանր պահեր ունեցանք: Աշոտ Նավասարդյանն ու իր համախոհներն առաջիններից էին, որ զենք վերցրեցին, և անգամ այդ ծանրությունն իրենց վրա կրեցին՝ թույլ տալով բանակի ստեղծմանը: Հետագայում օրենսդրական դաշտի կատարելագործման ընթացքում դարձյալ ՀՀԿ-ն, Աշոտ Նավասարդյանը առաջիններից էին, որ աջակցում էին բանակի կայացմանը օրենսդրական դաշտում: Երբ ընտրության խնդիր կար, ՀՀԿ-ն պիտի լիներ կամ չլիներ, ՀՀԿ-ն շատ ճիշտ ցենտրիստական դիրք գրավեց՝ ընդգրկվելով «Հանրապետության» բլոկի կազմում: Միշտ ամենուր իր սթափ, կառույցը պահպանող Հանրապետական կուսակցությունը եղել է պետության ձևավորման, կազմավորման կառույցներում, և ես՝ որպես Պաշտպանության նախարար, պիտի շնորհակալություն հայտնեմ կուսակցության այդ դիրքորոշման համար և խորը երախտագիտություն պիտի հայտնեմ կուսակցության ղեկավարներին: Եվ Աշոտ Նավասարդյանի բացակայության հարցով պիտի ասեմ՝ նա բանակի թիկունքից գնաց:

Մեր համագործակցությունը կշարունակվի և քաղաքացիական հասարակության պայմաններում: Եթե մենք պատերազմի ժամանակ կարողացանք այդպես խորը համագործակցել, ապա խաղաղության պայմաններում առավել ևս կարող ենք համագործակցել, համագործակցությունը կխորանա և մենք միասին կլինենք պետության

ստեղծման ակունքներում, և հետագայում կհասցնենք իր տրամաբանական զարգացմանը:

Երկրապահների հասարակական կազմակերպության անունից պիտի ողջույնի խոսքը տամ ձեզ: Պետական շինարարության խնդիրներում Արցախի հարցի շուրջ մեր տեսակետները համընկնում են և դարձյալ կլինի խորը համագործակցություն:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱԶԱՏ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ես իմ խոսքը սկսում եմ ավելի հեռվից, դեռ այն ժամանակից, երբ ստեղծվեց Ազգային Միացյալ կուսակցությունը և այնտեղ ստեղծված արժեքները կարծես թե պահպանվել են մինչև այսօր:

Հանրապետական կուսակցությունը այն քույր կուսակցություններից միակն է, որ պահպանել է տարիների առաջ պատանիների կողմից ստեղծված ԱՄԿ-ի ռոմանտիկ հայրենասիրությունը, և այսօր մեր պատանի պետությանն ամենաշատը հայրենասիրություն է անհրաժեշտ: Հանրապետական կուսակցությունը բոլոր կուսակցությունների շարքում իր անաչառ տեղն ունի՝ դա հայրենասիրությունն է: Հանրապետական կուսակցությունը միակ կուսակցությունն է, որ հավատարիմ մնաց մեր պատանեկան սկզբունքներին: Հանրապետական կուսակցության համար մեր ազգային արժեքների պահպանման հարցը ավելի բարձր է, քան որևէ այլ բան, նույնիսկ Սահմանադրության որևէ դրույթ: Այն խնդիրները, որ համագումարը դրել է իր առջև շատ կարևոր են:

Մենք ձեզ հետ ենք:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հարգելի կուսակիցներ, պատվարժան հյուրեր

Այսօր մեր կուսակցության համագումարին չի մասնակցում Հայաստանի Հանրապետական կուսակցության հիմնադիր և նախագահ Աշոտ Նավասարդյանը: Նոյեմբերի 3-ին կյանքից հեռացավ մի մարդ, որ 17 տարեկանից զինվորագրվել է Ազգի և Հայրենիքի ծառայության վեհ գործին: Աշոտ Նավասարդյանը 18 տարեկանում դարձել էր Ազգային Միացյալ կուսակցության երդվյալ անդամ, իր հայրենանվեր գործունեության համար խորհրդային բռնապետության կողմից դատապարտվել 24 տարվա ազատազրկման, աքսորում և կալանավայրերում անցկացրել է 12 տարի:

Արցախյան ազատամարտի սկզբում, երբ դեռ չկար պետական բանակ, նա հիմնադրեց ու ղեկավարեց «Անկախության բանակ» ռազմաքաղաքական կազմակերպությունը, որը մասնակցելով Հայրենիքի սահմանների պաշտպանության և Արցախի ազատագրման բազմաթիվ մարտերին, փառքով պսակեց իր ու իր ղեկավարի անունը:

Աշոտ Նավասարդյանը աննկուն քաղաքական մարտիկ էր, մեր պետականության կայացմանը անմնացորդ նվիրված հայորդի:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը այսուհետ ևս գործելու է պետության մեջ

ազգային արժեքների գերակայության սկզբունքի դիրքերից, սկզբունք, որի մեծագույն ջատագովն ու կրողը ինքն էր՝ Աշոտ Նավասարդյանը:

Հարգելի կուսակիցներ, պատվարժան հյուրեր.

Հայաստանի Հանրապետական կուսակցության 1995թ. դեկտեմբերին տեղի ունեցած 2-րդ համագումարից հետո ընկած ժամանակաշրջանը մեր ազգի ու պետության կյանքում եղել է քաղաքական բուռն գործընթացների, տնտեսական համակարգի արմատական փոփոխությունների շարունակման և սոցիալական լարված վիճակի խիստ բարդ շրջան:

Հաշվետու ժամանակահատվածում մեր կուսակցությունը սկզբունքային դիրքորոշում է ցուցաբերել երկրում ծավալված քաղաքական գործընթացներին, ակտիվորեն մասնակցել դրանց և իր ավանդը ներդրել պետականության կայացման գործին: Գաղափարապես կայուն, պայքարի արդիական քաղաքական սկզբունքներով առաջնորդվող ուժեղ ու հզոր կազմակերպության կայացումը եղել է մեր կուսակցության առանցքային խնդիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հանրապետական կուսակցությունը, կառուցվածքային փոփոխություններ կատարելով տարածքային կազմակերպություններում, կարողացավ իր կառուցվածքը համապատասխանեցնել պետության վարչա-տարածքային բաժանումներին և, սկզբունքորեն, հնարավորություն տալ տարածքային կազմակերպությունների հզորացմանն ու ակտիվացմանը: Ստեղծվել են բազմաթիվ սկզբնական խմբեր, աշխատանքներ են կատարվում տարածքային կազմակերպություններ ստեղծելու Եղեգնաձորում, Էջմիածնում, Արագածոտնի մարզում: Նոր անդամների հոսքը կապված է ոչ թե պաշտոն ձեռք բերելու, կուսակցության կողմից հովանավորվելու, այլ կուսակցության գաղափարախոսությունը՝ Նժդեհյան Ցեղակրոնությունն ընդունելու, դրա ճանաչում գտնելու ու տարածվելու հետ: Այս խնդիրը լուծելուն իրենց հրապարակումներով մեծապես նպաստել են «Հանրապետական» պաշտոնաթերթը և «Ազգայնական» մատենաշարը, վերջինս լույս է տեսնում 1996 թվականից՝ երկու ամիսը մեկ անգամ: Կուսակցության ֆինանսական հնարավորությունների ամրապնդման հետ կավելանա նմանատիպ հրապարակումների թիվը: Կուսակցության պաշտոնաթերթը, ցավոք, տպվում է ամիսը մեկ անգամ, ինչը դժվարացնում է մեր գաղափարախոսության և քաղաքական գործունեության տարածումն ու քարոզչությունը: Չնայած այդ հանգամանքին, այդ գաղափարներն ու քարոզչությունը տարածվում են նաև բանակում, ուժային մյուս կառույցներում: Մենք շեշտը չենք դնում կուսակցականության վրա: Մեզ համար էականը ազգային գաղափարախոսության հիմք հանդիսացող Ցեղակրոն ու Տարոնական ուսմունքների տարածումն է, որն անհրաժեշտ է Հայրենիքը պաշտպանելու, ձեռք բերված նվաճումները պահպանելու և ավելացնելու, հայի, զինվորի հոգեբարոյական արժեքները վերագտնելու, վերաիմաստավորելու, Հայրենիքը շենացնելու համար:

Ակտիվությամբ է գործում կուսակցության երիտասարդական կազմակերպությունը՝ «Ցեղակրոն երիտասարդաց դաշինքը»: Այն մասնակցում է հանրապետությունում ստեղծված Երիտասարդական միության աշխատանքներին՝ որպես դրա հիմնադիրներից մեկը, ինչպես նաև հանրապետությունում և նրանից դուրս կազմակերպված սեմինարների աշխատանքներին: Մեր ապագան երիտասարդական կազմակերպությունն է, և ամեն ինչ արվում է նրան քաղաքական գործունեության մեջ ընդգրկելու համար:

1997-ին կուսակցության բազմաթիվ անդամներ Պաշտպանության նախարարության սոցիալական պաշտպանության վարչության միջոցով պատերազմի մասնակցի վկայականներ ստացան: Նրանցից շատերը «Երկրապահ կամավորականների միության» անդամներ են, միություն, որի շարքերում կան այնպիսի մարդիկ, որոնք իրենց կյանքը, առողջությունը, բարեկեցությունը ի սպաս են դրել և պատրաստ են դարձյալ ի սպաս դնելու Հայաստանի և Արցախի անվտանգության պաշտպանությանը, մարդիկ, որոնց մեծ մասի սոցիալական վիճակը հեռու է բավարար լինելուց: Կուսակցությունը հետագայում ևս պատրաստ է աջակցելու Միությանը և համագործակցելու նրա հետ:

1994 թվականի վերջերին ստեղծված «Հանրապետություն» միավորումը, ինչպես նաև 1995թ. հուլիսի 5-ից հետո Ազգային Ժողովում կազմավորված «Հանրապետություն» պատգամավորական խմբակցությունն իրենց գործունեությամբ ապացուցեցին իրենց գոյության ճշմարտացիությունը: Համախմբվելով սկզբունքային հարցերի շուրջ՝ Միավորումը կարողացավ իր ծանրակշիռ ավանդը ներդնել պետության կայացմանը, Արցախի

հիմնահարցին սատար կանգնելու, տնտեսական բարեփոխումները խորացնելու գործընթացներին:

Այսօրվա վիճակի համար Միավորումն ունի իր քաղաքական պատասխանատվությունը, ցավոք, միայն քաղաքական պատասխանատվություն: Ազգային Ժողովում մեծամասնություն կազմող քաղաքական ուժը, հավանություն տալով կառավարության ծրագրին, հետագայում զրկվեց իր նախընտրական ծրագրում որդեգրած սկզբունքներն իրագործելու հնարավորությունից: Որդեգրվեց մի սխալ մոտեցում, թե Միավորումը խորհրդարանական քաղաքական ուժ է և պետք է գործի միայն խորհրդարանում, վստահի գործադիր իշխանություններին՝ առանց խառնվելու վերջինիս ներքին գործերին: Կյանքը ցույց տվեց նման մոտեցման արժեքը: Նախագահական ընտրությունների նախօրյակին արդեն իսկ ակնհայտ էր, որ կառավարությունը չէր կարողանում իրագործել Միավորման նախընտրական ծրագրում ամրագրված ցուցանիշները: Դրա փոխարեն կուտակվել էր բացասական երևույթների մի ողջ շարք, այդ թվում՝ վարկերի անվերահսկելի օգտագործում, կաշառակերություն ու հովանավորչություն: Գործադիր իշխանություններում մասնակցություն չունենալով, մենք պատասխանատվություն ենք կրում ծրագրի չիրագործված կետերի համար: Պատահական չէր 1996թ. փետրվարին Միավորման երեք՝ Հանրապետական, Քրիստոնեա - դեմոկրատական միության, Ռամկավար Ազատական (Լիբերալ-դեմոկրատական) կուսակցությունների համատեղ հայտարարությունը, որտեղ մեր մտահոգությունը արտահայտվեց միավորման պասիվ վիճակի, քաղաքական համակարգի հետագա զարգացման խնդիրների նկատմամբ: Ցավոք, ՀՀԾ վարչությունը չանսաց այդ մտահոգությանը: Մեր կուսակցության անդամներից շատերն են մասնակցել 1996թ. ընտրությունների քարոզարշավին, եղել են Միավորման թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի անդամներ, վստահված անձիք, և այդ քաղաքականության բացասական հետևանքների ականատեսն են: Կառավարությունը, մարզային իշխանությունները կարծես ամեն ինչ անում էին նախագահի թեկնածուին, Միավորմանը վատ դրության մեջ դնելու համար, որովհետև իրենք դրա համար պատասխանատվություն չէին կրում: Ցավոք, առ այսօր շարունակվում է այդ քաղաքականությունը: Միավորման քաղաքական մարմնում այս հարցը շատ է քննարկվել և այժմ էլ քննարկվում է: Հուսով ենք, որ ելք կգտնվի և Միավորման գործունեությունն այնպես կկազմակերպվի, որ 1999թ. խորհրդարանական ընտրություններին կկարողանանք գնալ առանց ժողովրդից ամաչելու՝ հաղթելու նպատակով:

Միավորումն իր պոտենցիալ քաղաքական հնարավորությունները չի սպառել: Մեր կուսակցության մասնակցությունը Միավորման աշխատանքներին կասկածի տեղ չի տվել, և մենք պատրաստ ենք շարունակելու համատեղ քաղաքական աշխատանքները այդ սկզբունքների իրագործման համար, որ որդեգրել էինք դեռ 1994-ին և, որը կհստակեցվի մոտակա ժամանակներում՝ հաշվի առնելով երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացները:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը Ազգային Ժողովում 1995թ-ից ներկայացված է եղել չորս պատգամավորով, 1997-ից՝ հինգով: Նրանք մշտական հիմունքներով աշխատել են Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներում. կուսակցության նախագահ Աշոտ Նավասարդյանը՝ Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, Անդրանիկ Մարգարյանը և Յուրի Բախշյանը՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ, Գալուստ Սահակյանը՝ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, Գագիկ Մինասյանը՝ ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: Նրանք հանձնաժողովներում ակտիվորեն մասնակցել են օրենքների նախագծերի մշակմանը, քննարկմանը, ներկայացրել բազմաթիվ առաջարկություններ, հանդես եկել ելույթներով և հանձնաժողովի կողմից ներկայացրել են օրենքների նախագծեր:

Չեմ ցանկանում խորամուխ լինել Ազգային Ժողովում մեր պատգամավորների կատարած աշխատանքին, ընձեռնված հնարավորությունների օպտիմալ օգտագործմանը, հավանական է, որ դա կանեն իմ ընկերները:

Բացի օրենսդրական գործունեությունից, մեր պատգամավորները մասնակցել են նաև միջխորհրդարանական աշխատանքներին՝ եղել են պաշտոնական պատվիրակությունների անդամներ, խորհրդարանական վեհաժողովների մասնակիցներ, տարբեր երկրներում անցկացվող ընտրությունների դիտորդներ, միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարների մասնակիցներ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

Կուսակցության նախագահ Աշոտ Նավասարդյանը 1996թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին եղել է Գերմանիայում՝ մասնակցելով ստրատեգիական հետազոտությունների ամերիկյան Մարշալի կենտրոնի դասընթացներին:

Հանրապետական կուսակցության պատգամավորները, լինելով ԱԺ «Հանրապետություն» միավորման խմբակցության անդամներ, մասնակցել են Ազգային Ժողովի աշխատանքներին՝ հավատարիմ մնալով ինչպես «Հանրապետություն» միավորման նախընտրական ծրագրին, այնպես էլ կուսակցության որդեգրած գաղափարախոսական և քաղաքական ուղղվածությանը:

Եղել են դեպքեր, երբ, ըստ մեր պատկերացումների, երկրի համար կարևորագույն օրենքների նախագծերի քննարկման ժամանակ մեր կուսակից պատգամավորները ցույց են տվել իրենց սկզբունքային դիրքորոշումները՝ քվեարկելով «Հանրապետություն» խմբակցությունից տարբեր: Ի դեպ, Ազգային Ժողովում ներկայացված բոլոր կուսակցություններից մեր կուսակցությունը էականորեն տարբերվում է իր համերաշխությամբ, գործողություններին համակարգված մոտեցմամբ, որն արտահայտվում է քվեարկության միանմանությամբ:

1996-ի քաղաքական կարևոր իրադարձություններից էին սեպտեմբերի 21-ի ՀՀ նախագահական ընտրությունները և նոյեմբերի 10-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

1996թ. հուլիսին կայացած կուսակցության 3-րդ արտահերթ համագումարում կուսակցությունը ՀՀ Նախագահի թեկնածու առաջադրեց Լևոն Տեր-Պետրոսյանին և հետագայում «Հանրապետություն» միավորման մյուս կուսակցությունների հետ պաշտպանեց նրա թեկնածությունը: Նախագահական ընտրություններին կուսակցությունը մասնակցեց ակտիվորեն՝ սկսած առաջադրման ստորագրությունները հավաքելուց մինչև ընտրությունների օրը՝ տեղամասային հանձնաժողովներում:

Նախընտրական շտաբերում աշխատել է կուսակցության 15 անդամ, 23 մարդ եղել է վստահված անձ: Նրանք մասնակցել են նախընտրական քարոզչությանը, ունեցել ելույթներ, հանդիպել ընտրողների հետ: Տասնյակ կուսակցականներ աշխատել են տեղամասային, մարզային և կենտրոնական հանձնաժողովներում: Կարևոր եմ համարում, որ աշխատանքները կատարվել են ոչ միայն Երևանում, այլ նաև մյուս մարզերում՝ Սյունիքում, Վայքում, Արարատում, Գեղարքունիքում և այլն:

Ցավոք, նախագահական ընտրությունների քարոզչական արշավը չօգտագործվեց լավագույն ձևով, տեղի ունեցավ ուժերի, հնարավորությունների գերագնահատում, գործադիր իշխանությունները, կառավարությունը, հաշվի չառնելով ազգաբնակչության մեջ կուտակված դժգոհությունը, կարծես ամեն ինչ անում էին իշխանությունների, նախագահի մինչ այդ կատարած աշխատանքների, ունեցած հաջողությունների վրա ստվեր գցելու համար: Կարելի է նշել, որ նախագահի, թեկուզ փոքր առավելությամբ ձեռք բերած հաղթանակում առյուծի բաժինը պատկանում էր հենց իրեն՝նախագահին: Նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած սեպտեմբերյան ցավալի դեպքերը ստվեր գցեցին պետության վարկի վրա: Սեպտեմբերի 21-ին ընդդիմությունը չկարողացավ օգտագործել այն վարկանիշը, որ ձեռք էր բերել ընտրություններում և սեպտեմբերի 25-ին այն կորցրեց, միաժամանակ՝ արտաքին ուժերին առիթ տալով խառնվելու Հայաստանի ներքին գործերին՝ անբարենպաստ մթնոլորտ ստեղծելով մեր պետության համար: Այդ էր պատճառը, որ 1996թ. նոյեմբերի 21-ին կուսակցությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ արձանագրելով, որ Եվրախորհրդարանը խառնվում է մեր ներքին գործերին: Սեպտեմբերի 26-ը դարձավ 25-ի շարունակությունը՝ այս անգամ գլխավոր դերակատար դարձան իշխանությունները, որոնք ստվեր գցեցին ընտրությունների վրա, առաջ քաշվեցին մեղադրանքներ, որոնք մնացին անապացույց: Ասես դիտմամբ, դրությունը ապակայունացնող քայլեր էին արվում: Վերոհիշյալ հարցերի

վերաբերյալ վերջնական որոշում ընդունելու լիազորությունը վերապահված էր Սահմանադրական դատարանին, որն էլ կայացրեց այն:

1996-ի հաջորդ կարևոր իրադարձությունը տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ավագանու անդամների և ղեկավարների ընտրություններն էին: Կուսակցությունը վեց համայնքներում, որոնցից մեկը Երևանի Աջափնյակ համայնքն էր, առաջադրել էր թեկնածուներ, որոնցից ընտրվեցին երկուսը: Իսկ առաջադրված 40 թեկնածուներից ավագանու անդամ ընտրվեցին 15-ը: Միավորման կուսակցությունների նախնական պայմանավորվածությունները՝ միմյանց թեկնածուներին աջակցելու վերաբերյալ, չկատարվեցին ՀՀԾ-ի կողմից: Այսինքն՝ այն համայնքներում, որտեղ որոշվել էր աջակցել ՀՀԾ-ի թեկնածուներին, մեր կողմից կատարվեց, իսկ մեր թեկնածուների պաշտպանությունը նրա կողմից՝ հիմնականում չկատարվեց:

Եթե 1996 թվականը ընտրությունների և հետընտրական գործընթացների տարի էր՝ իր բուռն և հակասական բովանդակությամբ, ապա 1997 թվականը եղավ ներքաղաքական հարցերի սուր արծարծման և Արցախի հիմնահարցով լեցուն շրջան:

Նախ, անդրադառնանք ներքին հարցերին: 1996թ. վերջերին փոխվեց վարչապետ Հրանտ Բագրատյանը, որի անվան հետ կապված էին 3-4 տարիների և ձեռքբերումները, և բացթողումները: Նշանակվեց նոր վարչապետ՝ Արմեն Սարգսյանը, որը, ցավոք, հիվանդության պատճառով չկարողացավ շատ թե քիչ ազդեցություն թողնել ներքաղաքական կյանքում: Հանրապետության նախագահի Ռոբերտ Քոչարյանին վարչապետ նշանակելու որոշումը սկզբնական շրջանում միանշանակ չգնահատվեց, վերաբերմունքը նույնիսկ զգուշավոր էր: Հետագայում, վարչապետի կողմից ձեռնարկված բյուջեն կատարելու համար ստվերային տնտեսության դեմ պայքարելուն ուղղված գործողությունները դրական արձագանք գտան ժողովրդի և քաղաքական ուժերի մեջ:

Ցավոք, «Պետական պաշտոնյայի մասին» օրենքի բացակայության պատճառով վարչապետի ամեն մի փոփոխության դեպքում պետական ապարատն ընկնում է ցնցումների մեջ, որոշ ժամանակ կաթվածահար է լինում կառավարման մեխանիզմը, սկսում են աշխատել ստվերային ուժերը՝ փորձելով իրենց համար ստեղծել բարենպաստ պայմաններ: Այս ամենից տուժում է պետությունը, ավելանում ժողովրդի դժգոհությունը, կորչում հավատը պետականության, անկախության նկատմամբ: Այս բոլորից օգտվում են և արտաքին, և ներքին այն ուժերը, որոնք կցանկանային վերականգնել հինը, կամ հնին, անցածին նոր շորեր հագցնել:

Հայաստանում սկսվեց մի շարժում, որի նպատակն է միանալ Ռուսաստան-Բելառուս միությանը: Սկսվեց ստորագրությունների հավաքման գործընթաց՝ այդ միությանը անդամակցելու նպատակով: Այդ արշավը գլխավորում էին Կոմկուսն ու կոմունիստամետ այլ «գործիչներ»: Սակայն ցավալի էր, որ դրան միացել են մի շարք մտավորականներ: Քարոզարշավը վտանգավոր էր այն պատճառով, որ այսօրվա բազմաթիվ դժվարություններն ու թերացումները ներկայացվում էին որպես անկախության հետևանք և ժողովրդի մեջ բորբոքում կարոտախտ խորհրդային վերջին տարիների «կուշտ» կյանքի նկատմամբ: Համոզում էին, որ միայն այդ ճանապարհով է հնարավոր Արցախյան խնդրի հայանպաստ լուծումը, հանրապետությունում առկա տնտեսական ճգնաժամի հաղթահարումը, արտաքին ճնշումների դիմակայումը: Իրենց հայ եղբայրներին օգնության եկան մեծ եղբայրները, որոնք այստեղ գործում էին սեփական Էմիսարների և տեղական ակտիվիստների միջոցով: Նրանք Ռուսաստանի Դումայում ընդունեցին բանաձև, որով իրենց համակրանքն ու աջակցությունն էին խոստանում: Այդ բանաձևը ուղարկվեց ԱՊՀ երկրների խորհրդարաններին:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունն իր սկզբունքներին հավատարիմ, անհաշտ պայքար է մղելու մեր պետության ինքնիշխանության սասանմանն ուղղված բոլոր ոտնձգություններին՝ անկախ այն բանից, թե որ ուժերը կլինեն դրա նախաձեռնողները: Այս սկզբունքից ելնելով, Հանրապետական կուսակցության խորհուրդը 1997թ. հունիսի 6-ի և հուլիսի 15-ի իր հայտարարություններով դատապարտեց այդ շարժումը2 և արտահայտեց իր դիրքորոշումը դրա վերաբերյալ:

1997-ի կարևոր քաղաքական իրադարձություններից էին նաև «Դրո» և «Վահան Հովհաննիսյան + 30» քրեական գործերի ընթացքն ու դատարանների որոշումները: Այս գործերն, իրենց մեջ պարունակելով քրեական հանցագործություններ, միաժամանակ ունեին

նաև քաղաքական նշանակություն: Արգելված է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, նրա կարևոր պատասխանատուները մեղադրվում էին այս գործում, նրանց մի մասը Արցախյան հերոսամարտերին մասնակցած մարդիկ էին: Հասկանալի էր, որ քրեական հանցանքները պատժվում են բոլոր պետություններում՝ անկախ դիրքից և ունեցած արժանիքներից, բայց, միաժամանակ, ընդունելի է նաև այս հարցերին քաղաքական լուծում տալու վճիռը: Հուսադրող է իշխանություններ-ՀՅԴ հարաբերությունները նախկին թշնամական վիճակից բանակցային, երկրի օրենքներին ենթարկվելու հարթություն տեղափոխելու գործընթացը: Հուսով ենք, որ երկկողմանի բարի ցանկությունների, իրական կյանքն արտացոլելու, քաղաքացիական հասարակություն ստեղծելու մղումների շնորհիվ, կլուծվեն կուտակված խնդիրները:

Հաշվետու ժամանակաընթացքում Արցախի հարցը եղել է ազգի, պետության քաղաքական ուժերի հետաքրքրությունների կիզակետում: Հանրապետական կուսակցությունը՝ ելնելով իր գաղափարախոսական հիմնադրույթներից, մշտապես եղել է Արցախյան խնդրի հայանպաստ կարգավորումը ռազմավարական նշանակության հարց համարող ուժերի առաջին շարքերում: Կուսակցությունը իր գործողություններով, հայտարարություններով արձագանքել է այդ հիմնահարցի շուրջ ընթացող քաղաքական գործընթացներին:

1996թ. ապրիլին «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կազմակերպված Ազգային տուրքի Ստեփանակերտ-Երևան-Լոս Անջելես հեռուստամարաթոնին մասնակցեց նաև Հանրապետական կուսակցությունը: Մենք հայտարարությամբ դիմեցինք մեր կուսակիցներին և համակիրներին՝ կոչ անելով ակտիվորեն մասնակցել հեռուստամարաթոնին: Կատարված հանգանակությունը փոխանցվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Ադրբեջանական նավթի ու դրա տեղափոխման ուղիների հարցը վերջին ժամանակաընթացքում դարձել է հզոր պետությունների ու կազմակերպությունների համար արտակարգ կարևորագույն խնդիր: Այդ պետությունները հաճախ Արցախյան խնդրի նկատմամբ իրենց մոտեցումները բխեցնում են իրենց «նավթային» քաղաքականության շահերից: Այս առումով հատկանշական են, մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումներում նկատվող տեղաշարժերը:

1996թ. հունվարին, ԱՊՀ երկրների ղեկավարների հանդիպումից հետո, Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի մամլո ասուլիսում արված հայտարարությունը դրա ապացույցներից մեկն էր: Այս առթիվ Հանրապետական կուսակցությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ Ելցինի հայտարարությունը գնահատվեց որպես Ադրբեջանի և Ռուսաստանի միջև, Ռուսաստանի և Ադրբեջանի միջև նավթամուղի վերաբերյալ կնքված պայմանագրի կապակցությամբ արված ռեվերանս: Միաժամանակ, կուսակցության հայտարարությունում նշվեց, որ ԼՂՀ և ՀՀ իշխանությունների որդեգրած դիրքորոշումներն են, որ կանխորոշելու են խնդրի վերջնական լուծումը:

1997թ. հուլիսին Հանրապետական կուսակցության նախագահ Աշոտ Նավասարդյանը մասնակցեց Ստեփանակերտյան խորհրդակցությանը, որտեղ ընդունվեց կուսակցություններին ու հասարակական կազմակերպություններին ուղղված Ստեփանակերտյան կոչը: ԼՂՀ անկախության ու ինքնիշխանության պաշտպանությանն ուղղված այդ կոչի նախաձեռնողներից մեկը մեր կուսակցությունն էր:

Ի պատասխան Լիսաբոնյան գագաթաժողովին հաջորդած քաղաքական ճնշումների, 1997թ. հուլիսին Հանրապետական կուսակցությունը հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ, որտեղ նշվում է, որ հայությանը չի կարող բավարարել Արցախի պետականության ձևական կողմ ապահովող մի քանի խորհրդանիշների ընդունումը Ադրբեջանի կողմից: Մենք հաստատակամորեն մնում ենք այն դիրքորոշմանը, որ անկախ ու ինքնիշխան հայկական պետականությունը այսօր տարածվում է մեր Հայրենիքի 45 հազար քառակուսի կմ տարածքի վրա: Այդ տարածքը նվաճված է մեր բազում նվիրյալների կյանքի ու հայության մեծագույն զրկանքների գնով: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, ելնելով իր գաղափարախոսական սկզբունքներից, ոչ մի հիմնավորմամբ չի համակերպվի այդ նվաճումների զիջման հետ և չի համագործակցի որևէ քաղաքական ուժի հետ, որը որևէ հիմնավորմամբ առաջ կքաշի Հայրենիքի տարածքի զիջման անհրաժեշտությունը:

ԿԵՑՑԵ՛ ԱՋԱՏ, ԱՆԿԱԽ ՈՒ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

* * *

ՀՀԿ կանոնադրության (ծրագրի) փոփոխությունները պատվիրակներին ներկայացրեց Գ. Մինասյանը:

Գագիկ Մինասյանի զեկուցը

Հարգելի հանրապետականներ, հյուրեր.

ՀՀԿ գործող կանոնադրությունը ընդունվել է կուսակցության 2-րդ համագումարի կողմից 1995թ.-ի դեկտեմբերի 2-ին և հաստատվել ՀՀ արդարարդատության նախարարությունում նույն թվականին: Այս 2 տարիների ընթացքում Հայաստանում քաղաքական իրադրությունը որոշակի զարգացում է ապրել: Կուսակցության կանոնադրությունը նոր իրողություններին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ է պայմանավորված կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները: Սրանք մշակվել են աշխատանքային խմբի կողմից և ներկայացվել կուսակցության խորհրդին, որը իր մի քանի նիստերի ընթացքում անդրադարձել է այդ առաջարկություններին, լրացումներին ու փոփոխություններ կատարել դրանց մեջ: Խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո դրանք ներկայացվել են ներկայացուցչական ժողովին և արժանացել են հավանության 1997թ. նոյեմբերի 29-ին:

Կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները վերաբերվում են մի շարք հոդվածների: Սակայն դրանք կարելի է խմբավորել թվով 9-ը ուղղությունների: Ձեզ բաժանված է կուսակցության գործող կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները և դրանց հիման վրա կազմված նոր կանոնադրության նախագիծը: Նախագծի ձեզ բաժանված տարբերակում տեղ է գտել վրիպակ՝ հոդված 15-ում, 2-րդ նախադասության մեջ «կայանում է» բառից հետո պետք է գրված լիներ «առնվազն» բառը, այնուհետև՝ այնպես, ինչպես կա տեքստում:

Այժմ կներկայացնեմ հիմնական ուղղությունները.

1. Հանված է կուսակցության թեկնածուի կարգավիճակը: Այս փոփոխությունը ավելի կհամապատասխանի ժողովրդավարական սկզբունքներին:
2. Կուսակցության անդամ դառնալու համար երաշխավորության պահանջը:
3. Համագումարը տարբերակված է հերթական և արտահերթ:
4. Փոփոխված է սկզբնական, տարածքային խմբի հաշվետվության ժամկետները:
5. Հանված է համաժողովի մասին հոդվածը. փոխարինված է ներկայացուցչական ժողովով:
6. Ներկայացուցչական ժողովը հրավիրել 3 ամիսը 1 անգամ, անհրաժեշտության դեպքում հրավիրել ներկայացուցչական ժողովի արտահերթ նիստ:
7. ՀՀԿ խորհրդի նախագահի կարգավիճակը:
8. Մտցված է ՀՀԿ խորհրդի նախագահի տեղակալի կարգավիճակը:
9. Վերստուգիչ հանձնաժողովի ստեղծում:

Շնորհակալություն:

Համագումարը քննարկեց ու հաստատեց ՀՀԿ կանոնադրական փոփոխությունները:

ՀՀԿ 4-րդ համագումարի որոշումը ՀՀԿ կանոնադրության /ծրագրի/ փոփոխությունների մասին

ՀՀԿ 4-րդ համագումարը, քննարկելով ՀՀԿ կանոնադրության /ծրագրի/ փոփոխությունները,

որոշեց

Հաստատել ՀՀԿ կանոնադրության /ծրագրի/ փոփոխությունները:

* * *

Հարակից ելույթներով հանդես եկան Գ. Մինասյանը, Մ. Լալայանը, Գ. Գագյանը, Գ. Սահակյանը, Տ. Թորոսյանը, Ս. Նիկոյանը,Գ. Բախշյանը, Յու. Բախշյանը: Ելույթի համար ձայն տրվեց Հասմիկ Նավասարդյանին:

Գ. Սահակյանն առաջարկեց ՀՀԿ նախագահ ընտրել Ա. Մարգարյանին: Առաջադրված թեկնածությունը պաշտպանելու հարցով ելույթ ունեցան Յու. Բախշյանը, Ա. Կիրակոսյանը, Ա. Աղաբաբյանը:

Յուրի Բախշյանի ելույթը

Կուսակցությունը ուժեղ է իր գաղափարախոսությամբ, իր սկզբունքներով, իր կանոնադրությամբ, իր անդամներով, իր ղեկավար մարմնով, իր նախագահով: Այդպիսին էր Աշոտ Նավասարդյանը, որպես կուսակցության նախագահ:

Աշոտ Նավասարդյանի գաղափարակիցը դեռևս ԱՄԿ-ի տարիներից եղել է Անդրանիկ Մարգարյանը: Մի անձնավորություն, որը նույնպես հայրենիքին նվիրել է իր կյանքը, և հայրենիքի հանդեպ իր պարտականությունների կատարումը ոչ թե որպես կեցվածք, այլ ընդունում է որպես ապրելակերպ: Այդ համատեղ կյանքը՝ որպես ԱՄԿ անդամ, ապա Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ և ԱԺ պատգամավոր, մեզ վստահեցնում է, որ մենք Անդրանիկ Մարգարյանի հետ միասին կարող ենք իրականացնել այդ խնդիրները, որ մեր առջև ծառացած են:

Կարծում եմ, որ ճիշտ ընտրություն ենք կատարել՝ առաջադրելով Անդրանիկ Մարգարյանի թեկնածությունը Հանրապետական կուսակցության պատվաբեր նախագահի պաշտոնում:

Շնորհակալություն:

Անահիտ Կիրակոսյանի ելույթը

Հարգելի պատգամավորներ.

Բնականաբար, ով էլ լինի կուսակցության նախագահ, նրա խնդիրը շատ ավելի դժվար է լինելու: Աշոտ Նավասարդյանից հետո միշտ կանցկացվեն զուգահեռներ նրանց գործունեություններում:

Անդրանիկին ճանաչում եմ դեռ 70-ական թվականներից, նա եղել է իմ մարտական ընկերը, ազնիվ է, հայրենասեր: Բարձր եմ գնահատում նրա կարողությունները պետականության կերտման գործում:

Ես պաշտպանում եմ Յուրա Բախշյանի առաջարկը՝ Անդրանիկ Մարգարյանի թեկածության կապակցությամբ: Նա արժանի է այդ բարձր պաշտոնին:

Աշոտ Աղաբաբյանի ելույթը

Իրոք, ճիշտ ասաց Անահիտը, որ Աշոտ Նավասարդյանից հետո դժվար է լինել կուսակցության նախագահ: Բայց չմոռանանք, որ Աշոտ Նավասարդյանը լիովին վստահում էր Անդրանիկ Մարգարյանին և նրա հետ կիսում էր կուսակցական աշխատանքի ամբողջ ծանրաբեռնվածությունը: Մենք անցանք պատերազմ, և այսօր էլ դժվարին ուղի ունենք անցնելու: ԵՎ մեզ՝ հանրապետականներիս, առաջնորդելու ներուժը տեսնում եմ Անդրանիկ Մարգարյանի մեջ:

Ես պաշտպանում եմ Անդրանիկ Մարգարյանի թեկածությունը:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքում ՀՀԿ նախագահ ընտրվեց Անդրանիկ Մարգարյանը:

ՀՀԿ պատվիրակները ծափողջուններով շնորհավորեցին նորընտիր նախագահ Ա. Մարգարյանին:

Այնուհետև ելույթ ունեցավ Ա. Մարգարյանը: Ա. Մարգարյանը կուսակցության հետագա գործունեության վերաբերյալ իր ելույթում հավաստեց, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունն այսուհետ ևս, հավատարիմ Ցեղակրոն և Տարոնական գաղափարախոսություններին, կշարունակի գործել՝ ի շահ Ազգի և Հայրենիքի:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Կուսակիցներիցս և պատգամավորներից շնորհակալություն եմ հայտնում այն վստահության համար, որ ինձ ընտրեցին Հանրապետական կուսակցության նախագահ: Ես ձեզ ուղղակի հավաստիացնում եմ, որ այն գործը, որը սկսել էր Աշոտ Նավասարդյանը՝ ԱՄԿ անդամ լինելով 1968թ., մինչև վերջ իր կյանքը նվիրեց այդ գաղափարին: Ես՝ որպես իր զինակից, գաղափարակից, և որպես անձնական ընկեր, կաշխատեմ այսքան տարիներ ստեղծված ավանդույթը պահպանել, մեր կուսակցության գաղափարներին նվիրված լինել: Եվ այն մեծ պատասխանատվությունը, որ Աշոտից հետո ընկնում է իմ ուսերին, ես հուսով եմ, որ ինչպես Աշոտի ժամանակ մենք ամբողջ խմբով, թիմով ենք աշխատել, կշարունակվի նաև այսուհետ:

Ես ակնկալում եմ ձեր բոլորի ուշիմությունը, աջակցությունը՝ մեր կուսակցության խնդիրները լուծելու համար: Նորից խորին շնորհակալություն եմ հայտնում իմ նկատմամբ այդպիսի վստահություն տածելու համար: Աշոտ Նավասարդյանի հիշատակը մեր բոլորի

սրտում է, մտքում է: Արդեն մեկ ամիս է, մենք միջոցառումներ ենք ձեռնարկել Աշոտ Նավասարդյանի հիշատակը հավերժացնելու համար: Դիմել ենք քաղաքապետարան կուսակցության գրասենյակի պատին հուշատախտակ ամրացնելու համար, ուզում ենք ընտրել այնպիսի դպրոց, որը կանվանակոչվի Աշոտ Նավասարդյանի անունով: Մինչև ծննդյան օրը՝ մարտի 28-ը, մենք կաշխատենք իր ելույթների գիրքը տպել, որի համար համաձայնություն ենք ձեռք բերել արդեն ԱԺ-ի հետ:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հանրապետական կուսակցության քաղաքական բաժինն իր մասնակցությունն է բերել կուսակցության քաղաքական գծի հստակեցման, ձևավորման հարցում: Քաղաքական բաժինը, ուշադրությամբ հետևելով հանրապետության և նրա սահմաններից դուրս ընթացող քաղաքական պրոցեսներին, առաջարկություններ է ներկայացրել կուսակցության խորհրդին, որի արդյունքում ընդունվել են որոշումներ, կատարվել համապատասխան գործողություններ այդ երևույթների նկատմամբ: Վերջին 2 տարիների ընթացում կուսակցությունն իր գործունեությունը ծավալել է «Հանրապետություն» միավորման շրջանակներում:

Կուսակցությունների միավորումում մենք մասնակցեցինք նոր պառլամենտական, ապա նախագահական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Բլոկային պարտականությունները մեր կուսակցությունը կատարել է ամենայն բծախնդրությամբ և այսուհետև շարունակելու է իր դերը: Լինելով հաղթանակ տարած միավորման կուսակցություն, մեր կուսակցությունը տեր է այն ամենին, որ ձեռք է բերվել վերջին տարիների ընթացքում, միաժամանակ պարտավորված է զգում այն բոլոր թերությունների համար, որ առկա են մեզանում: Սակայն, մասնավորեցնելով խնդիրը, պետք է ուշադրություն դարձվի մի հանգամանքի վրա, որ վերջին ժամանակներում շատ հաճախ է ասվում տարբեր ամբիոններից: Խնդիրը հետևյալն է. ըստ էության, հաղթանակ տարած քաղաքական ուժը բացարձակապես ներկայացված չէ գործադիր իշխանություններում: Ես ասում եմ արատավոր շրջան, երբ հաստարակության լայն շրջանակները և ընդդիմադիր ուժերը մեղադրում են հաղթանակ տարած քաղաքական ուժին, այդ թվում նաև մեր կուսակցությանը այն բանի համար, որ իրականացնում է իշխանության գործադիր թևը: Համոզված եմ, որ ճիշտ այնպես, ինչպես մեր կուսակցությունը, «Հանրապետություն» միավորման մյուս կուսակցությունները ևս չեն կարող բավարարվել այս վիճակով, և առաջիկա ընտրությունները թույլ կտան շտկել այս իրավիճակը: Համոզված եմ, թե այդ լուծումից է մեծապես պայմանավորված նաև այն հանգամանքը, թե ինչ հեռանկար ունի մեր միավորումը և կկարողանա, արդյո՞ք, միավորվել նոր պառլամենտական ընտրությունների համար:

Մեզ և միավորված անդամ կուսակցություններին միավորող շատ բաներ կան. առաջին հերթին դրանք պետականության կայացման խնդիրներն են, տնտեսական բարեփոխումների խնդիրը, ժողովրդավարության ձևավորման խնդիրը: Եվ այս երեք հիմնական ուղղություններում մենք համերաշխ ենք մեր գործողությունների մեջ, և չի եղել մի դեպք, որ միավորման անդամ մի կուսակցություն հանդես գա հայտարարությամբ՝ ի վնաս այդ

ուղղությունների: Միաժամանակ, մեր կուսակցությունն ունի առանձնահատկություններ և իր դիրքորոշումներով արտահայտում է այդ առանձնահատկությունները: Ի ուրախություն մեզ պետք է նշեմ, որ միավորման մյուս անդամների կողմից երբեք չեն նկատվել այդ առանձնահատկությունների դրսևորման զսպման երևույթներ: Մեր կուսակցությունը, ելնելով գաղափարախոսության դրսևորման սկզբունքներից, առանձնահատկությունները դրսևորվում է հատկապես պետականության կայացման և ազատագրված տարածքների նկատմամբ իր դիրքորոշումներով: Եվ պատահական չէ, որ մեր կուսակցության հայտարարությունները հիմնականում վերաբերում են այդ երկու խնդիրներին: Մասնավորապես, բերեմ երկու օրինակ, երբ վերջերս մեզանում ծայր առավ Հայաստան-Ռուսաստան, Ռուսաստան-Բելառուս միավորման գործընթացը և սկսեցին հավաքվել ստորագրություններ, մեր կուսակցությունը հանդես եկավ երկու հայտարարությամբ, որտեղ դատապարտեց այդ ելույթը, անսասան պատրաստակամություն հայտնեց մինչև վերջ պայքարելու մեր պետականության, անկախության համար, և պայքարելու է այն ուժերի և նրանց գործողությունների դեմ, որոնք կփորձեն սասանել այդ իշխանությունը: Բլոկի մյուս կուսակցությունները նման հայտարարություններով հանդես չեկան: Մեր կուսակցության հստակ դիրքորոշումը Արցախի հարցում հետևյալն է՝ այսօր Հայկական Անկախ պետականությունը տարածվում է 45.000 քառակուսի կմ տարածքի վրա և ոչ մի զիջում մենք այստեղից անելու հնարավորություն չենք տեսնում: Արդեն մեկ զիջում արված է, որ այդ տարածքի վրա պետք է գոյատևեն ոչ թե մեկ, այլ երկու՝ Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը: Որևէ այլ զիջում մենք չենք տեսնում:

Հաջորդ հարցը կապված է մեր հետագա պլանների հետ՝ ներքին քաղաքական իրավիճակի հետ, որը բարդացել է վերջին նախագահական ընտրություններին հաջորդած գործողությունների արդյունքում՝ ստեղծելով բավականին ծանր քաղաքական վիճակ: Արտաքին ուժերը չհապաղեցին օգտվել դրանից, մասնավորապես, Եվրախորհրդարանը իր հայտնի հայտարարությամբ, որտեղ դատապարտեց իշխանության դերը այդ իրավիճակում: Մեր կուսակցությունը հավատարիմ մնալով իշխանության սկզբունքներին, հանդես եկավ Եվրախորհրդարանի համար համապատասխան հայտարարությամբ: Այդ հայտարարությունը մենք գնահատում ենք անկախ պետականության նկատմամբ խոչընդոտ, միաժամանակ կոչ անելով ընդիմադիրներին՝ գտնել համաձայնության եզրեր՝ չապակայունացնելով երկրի ներքին քաղաքական իրավիճակը: Մենք այսուհետև էլ շարունակելու ենք պահպանել այդ դիրքորոշումը, պաշտպանելու ենք մեր անկախությունը, ազատագրված տարածքները, երկրի ներքին խաղաղ իրավիճակը:

Հարգելի կուսակիցներ, հարգելի հյուրեր.

Մեր երկիրը գտնվում է բավականին լուրջ անցումային շրջանում: Առաջիկայում պետք է տեղի ունենան լուրջ տնտեսական տեղաշարժեր, որոնց ընթացքով է միայն պայմանավորված մեր պետականության հետագա կայունացումը: ՀՀԿ-ն մինչ այժմ, այսուհետ ևս կանգնած է լինելու այդ տեղաշարժերի առաջամարտիկների շարքում և ամեն ինչ անելու է դրանց հաջող ավարտի համար:

Շնորհակալություն:

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ, «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հյուրեր, պատգամավորներ.

Կուսակցության գաղափարաքարոզչական աշխատանքը հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է երեք ուղղությամբ.

առաջինը՝ կուսակցության պաշտոնաթերթն է, որի էջերում ամփոփվել են մեր կուսակցության գաղափարախոսությունը, սկզբունքները, դրույթները, առհասարակ ներկայացվել է հայ ազգայնականության տեսությունը բնութագրող արժեքային համակարգը: Հաշվի առնելով ամսաթերթի կարգավիճակը, մեզ թույլ ենք տվել նաև գիտական, հրապարակախոսական բնույթի նյութերի զետեղում, որոնք կրկին վերաբերվել են հայոց ազգային արժեքային համակարգին՝ լինի դա կապված հայ ընտանիքի խնդիրների, ազգային տոների, ազգային գաղափարախոսության խնդիրների հետ, արծարծվել են, ասենք, ազգ, դավանանք, ազգային միասնություն և ներսեռային բարոյականի հետ կապված խնդիրներ:

Եվ պատահական չէ, որ թերթում արտացոլված շատ նյութեր հետագայում գրքույկի ձևով լույս ընծայվեցին: Դա ևս վկայում է, որ այդ նյութերը ունեին գաղափարական, քարոզչական, դաստիարակչական բնույթ:

Երկրորդ ուղղությունը գաղափարաքարոզչական աշխատանքի մատենաշարն է: 1996թ-ին կուսակցությունը որոշում ընդունեց հրատարակել ազգայնական մատենաշար, նպատակ ունենալով հայ հասարակությանը ներկայացնել մեր ազգայնականությունից բխող դիրքորոշումներ պետությունում, հասարակությունում առկա տարբեր խնդիրների նկատմամբ, հաշվի առնելով ինչպես պատմական իրողությունները, դասական մոտեցումները, այնպես էլ ազգայնականության արդի զարգացումը:

Բավական է թվարկել միայն մատենաշարի վերնագրերը, համոզվելու համար, որ իսկապես մեր առջև դրված խնդիրը մասնակիորեն լուծված է: Մենք, փաստորեն, մատենաշարի միջոցով պարզաբանել ենք Ազգի և դավանանքի փոխհարաբերության, ազգային գաղափարախոսության, տոների, ազգային միասնության խնդիրը, ինչպես նաև հատուկ հրատարակություն ունենք նվիրված հայրենասիրության խնդրին՝ կապված 1915թ.դեպքերի վերագնահատումի և դրան առնչվող խնդրի հետ: Սակայն մատենաշարը, փաստորեն, ութ համար լույս տեսնելուց հետո առայժմ լույս չի տեսնում, անշուշտ, ես վստահ եմ, որ հաջորդ տարվանից մատենաշարը կշարունակվի հրատարակվել:

Մեր աշխատանքի մյուս ոլորտը Հայաստանի զինված ուժերն են: Փաստորեն, մեր կապը բանակի հետ, որը հիմնականում իրականացվել է անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով վարչության հետ համատեղ, մոտավորապես այսպիսին է՝ մեր հրատարակությունները առաքվել են վարչություն, նրանց միջոցով զորամասեր, և այդպես բանակը քիչ թե շատ ծանոթացել է մեր գաղափարական դրույթներին, որն ըստ էության ոչ միայն մերն է, նաև մեր ազգինն է: Եղել են նաև անհատական հրավերքների կարգով հանդիպումներ զորամասերում, ռազմական ուսումնարաններում, որն, իհարկե, անհրաժեշտ է, բայց դրա անհրաժեշտությունը առանձնապես մեծ չէ, հաշվի առնելով մի քանի հանգամանքներ, որոնց ես հանգամանորեն կանդրադառնամ:

Նախարարության հետ այս վերջին ամսում «Ազգ, պետություն, բանակ» թեմայով գիտագործնական կոնֆերանսում, որը կազմակերպել էր նախարարությունը, մենք հանդես եկանք ելույթով: Կոնֆերանսը ցույց տվեց, (դատելով հնչած ելույթների ընդհանուր բովանդակությունից, թեմատիկայից), որ իսկապես մեր ներկայությունը և դավանած

գաղափարախոսության առկայությունը բանակում խիստ հրատապ է: Եվ պատահական չէ, որ դրանից հետո բանակի որոշ ղեկավարներ պարտավորություն վերցրին այս տարվա իրենց աշխատանքային պլանում ներառել այնպիսի միջոցառումներ, որոնք անուղղակիորեն առնչվում են մեր առաջարկների հետ, և հույս ունենք այս տարի ևս կհամագործակցենք, որի արդյունքում կարող է ստեղծվել հայ զինվորի գաղափարական ձեռնարկը: Հնարավոր է իրեց հովանու ներքո հրատարակեն Գարեգին Նժդեհի գործերի հատընտիրը: Մեր համատեղ աշխատանքը ակնառու կլիներ, եթե կից լիներ կոմիսարների այն ինստիտուտը, որը ցանկացած պետության մեջ առանձնակի դեր է խաղում նրա բանակի ձևավորման և գաղափարական ամրապնդման գործում:

Եվ դա պիտի լինի ոչ ստանդարտ եղանակներով: Եթե սպայական դպրոցներում, ռազմական ուսումնարաններում բացվեն համապատասխան ֆակուլտետներ՝ կոմիսարական, այդ ժամանակ մենք՝ որպես քաղաքացիական անձինք, ավելի արդյունավետ կարող ենք աշխատել մեր հասանելիք ուղղություններով, որովհետև մի բան է, երբ որպես քաղաքացիական անձ է զորամասում, մի տեսակ դիսբալանս է առաջանում զինվորականի և քաղաքացիական անձի միջև, միաժամանակ, երբ նա իբրև դասախոս, հանդես է գալիս ֆակուլտետում:

Ամփոփելով ելույթս, ես հույս եմ հայտնում, որ հետայսու ՀՀԿ-ն հավատարիմ մնալով իր դավանած գաղափարախոսությանը, դավանած սկզբունքներին, կշարունակի այդ ուղղություններով, ինչու չէ նաև, եթե հնարավոր կլինի նոր ուղղություններ նախանշել, տանել քարոզչական, գաղափարական արդյունավետ աշխատանք ի շահ մեր Ազգի և Պետության:

Շնորհակալություն:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԳԻԿ ԳԱԳՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի կուսակիցներ և հյուրեր.

ՀՀԿ-ի տնտեսագիտական հանձնաժողովը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է մի շարք աշխատանքներ, որոնք առնչվում են հանրապետության տնտեսական կյանքի մի շարք կարևոր հարցերին: Առավել նշանակալից աշխատանք, պետք է ասեմ, որ կատարվել է սեփականաշնորհման գործընթացի ուսումնասիրման և դրա հիման վրա համապատասխան առաջարկությունների մշակման ուղղությամբ: Սեփականաշնորհման գործընթացի նկատմամբ հանձնաժողովի կողմից այս առանձնահատուկ ուշադրությունը պայմանավորված է նրանով, որ հանրապետության վերջին տարիների տնտեսական կյանքում այս գործընթացները դիտվում են որպես տնտեսական բարեփոխումների հիմնական առանցք, որի հետ առանձնահատուկ մեծ հույսեր էին կապում տնտեսության արդյունավետության բարձրացման և տնտեսական կայուն աճի ապահովման համար: Մեր կուսակցության տնտեսական ծրագրում, ինչպես գիտենք, ամրագրված է, որ մենք ընդհանուր առմամբ ընդունում ենք տնտեսության բազմաձևությունը և միաժամանակ նշում ենք, որ այդ բազմաձևության և տնտեսության տարբեր ձևերի փոխհարաբերակցությունը որոշվի Հայաստանում տիրող իրավիճակից: Տնտեսության ազատականացումը ինքնանպատակ չէ, պետք է ծառայի ազգի բարգավաճմանը և ազգային արժեքների հաստատմանը: Պատմական այս ժամանակահատվածում, ընդունելով տնտեսության ազատականացման ամբողջ անհրաժեշտությունը, իհարկե, անհնարին է առանց սեփականության մասնավոր ձևերի զարգացման և շուկայական հարաբերությունների հաստատման:

Մենք, այնուամենայնիվ, չենք կարող համաձայնել սույն գործընթացների ձևի և մեթոդների հետ: Մեր խորին համոզմամբ, կան լուրջ թերություններ և սկզբունքային սխալներ: Չի կարելի չնշել, որ առ այսօր այս գործընթացներն իրականացնելիս անտեսվում են, այսպես կոչված, հետսեփականաշնորհման հարցերը, այսինքն, թե սեփականաշնորհումից հետո ձեռնարկությունները ինչպես պետք է աշխատեն և ինչ կարելի է անել նրանց գործունեությանը նպաստելու և խթանելու ուղղությամբ: Այս տեսակետից բավարար ուշադրություն չի դարձվել սեփականաշնորհումից բյուջետային մուտքերի եկամուտների վրա, որոնք իրենց հերթին կարող են ուղղվել ինվեստիցիոն ծրագրերի ֆինանսավորմանը, սեփականաշնորհված ձեռնարկությունների նպատակների վարկավորմանը, ինչպես նաև տնտեսական միկրոկառույցների զարգացմանը:

Պետք է ասել, որ այս հարցերը հավասարապես կարևոր են, և տնտեսական բարեփոխումների հաջող ընթացքը առավելապես կախված է այս խնդիրների համալիր լուծումից, և նրանցից որևէ մեկի անտեսումը կամ թերագնահատումը որևէ լավ բան խոստանալ չի կարող: Այդպես էլ եղավ գործընթացի սկզբում, երբ ողջ ուշադրությունը կենտրոնացված էր միայն ամեն կերպ պետական ունեցվածքի օտարմանը, ձեռնարկությունների սեփականաշնորհումը կատարվում էր հապճեպ, առանց անհրաժեշտ ուսումնասիրությունների: Գործընթացն ընդունել էր ինքնանպատակ բնույթ: Իշխում էր տնտեսության այն կոնցեպցիան, թե շուկան միանգամայն ինքնակառավարվող է, և բավական է տնտեսությունը ազատականացնել և ամեն բան իր տեղը կընկնի: Դրությունն էլ ավելի բարդացավ նրանով, որ ընդունելով տնտեսության արագ ազատականացման կուրս, միևնույն ժամանակ անտեսվեցին հենց նույն շուկայական օրինաչափությունները և մեխանիզմները, ինչը իրեն շուտով զգացնել տվեց: Կտրուկ կերպով ընկավ պահանջարկը սեփականաշնորհվող գույքի նկատմամբ: Բավական է ասել, որ մինչ այսօր կիրառված սեփականաշնորհման առավել մասսայական ձևի՝ բաց բաժնորդատվության բաժնետիրական ընկերությունների ձևավորման ժամանակ ձեռնարկությունների մեծ մասում տեղի է ունեցել կամ թերի բաժնորդագրում կամ էլ այդ բաժնորդագրումն ընդհանրապես չի կայացել: Սրան հետևեցին մամուլում և տարբեր ելույթներում պաշտոնական և ոչ պաշտոնական այն եզրակացությունները, թե Հայաստանի ձեռնարկությունները այնքան էլ գրավիչ չեն ինվեստորների համար, և դա այն դեպքում, երբ Հայաստանն ունի բավական որակյալ և էժան աշխատուժ, ինչը պետք է ասել, որ շատ դեպքերում համարժեք է նույնիսկ հարուստ հումքային բազաներին: Մեր խորին համոզմամբ, սեփականաշնորհվող ձեռնարկությունների նկատմամբ նվազ պահանջարկը կրում է արհեստական բնույթ և պայմանավորված է կառավարության կողմից ընդունված սխալ վարքով: Իսկ շուկայական մեխանիզմի սխալ պայմաններում նույնիսկ ամենալավ ապրանքը վաճառելը զգալի դժվարություններ է բերում: Այս ամենի մեջ համոզվելու համար բավական է մի փոքր ուսումնասիրել բաց բաժնետիրական ընկերությունների ձևավորման ներկայիս կառավարական կանոնակարգերը, որոնցով սեփականաշնորհվել են մեր հանրապետության ձեռնարկությունների զգալի մասը, և որի ժամանակ խախտվել են բաժնետոմսերի, հարկատուների անգամ տարրական իրավունքները՝ այն է իրենց կողմից սեփականաշնորհվող ձեռնարկության գին ձևավորելու հնարավորությունը: Ասենք թե, գնորդը շուկայում հնարավորություն չի ունեցել հայտարարել իր կողմից վաճառվող ապրանքի նկատմամբ գին: Բնական է, որ առանց այս հատկանիշի գնորդ լինել ընդհանրապես չի կարող, և սույն գործընթացը վերածվում է ընդամենը մի վիճակախաղի, որտեղ գերիշխում է պատահարը: Այսպիսի պայմաններում, իհարկե, շուկա ձևավորել հնարավոր չէ: Սեփականաշնորհման ներկայիս գործընթացները հնարավորություն են ստեղծել նաև սեփականաշնորհվող ձեռնարկությունների կանոնադրական հիմնադրամի չհիմնավորված, արհեստական ուռճացումների համար: Սա հիմնականում վերաբերվում է այն ձեռնարկություններին, որոնք բավականին շահութաբեր են և շուկայում զգալի պահանջարկ են վայելում: Հետևանքը լինում է այն, որ շահութաբեր ձեռնարկությունը արհեստականորեն հայտնվում է վնասաբերների շարքում, արհեսականորեն աճում է նրանց արտադրանքի ինքնարժեքը, որը բացասական է անդրադառնում նաև պետբյուջեի եկամուտների վրա: Այս բացասական երևույթները ազդում են նաև արժեթղթերի շուկայի վրա, որը առավել ևս կարևոր է, առաջացնելով բաժնետոմսերի

կուրսի անկում, ինչն այսօր առկա է ֆոնդային բորսայում: Սա իր հերթին նվազեցնում է այս ձեռնարկություններում նոր ինվեստիցիաներ անելու հնարավորությունը:

Հարգելի կուսակիցներ, այս քննադատական մոտեցումների հետ միաժամանակ, մենք փորձել ենք ցուցաբերել կոնստրուկտիվ մոտեցումներ: Այսինքն, ոչ միայն քննադատել առկա սխալները, այլ նաև տալ այս սխալների ուղղման ձևերն ու մեթոդները: Այս նպատակով մեր կողմից մշակվել էր բաց բաժնետիրական ընկերությունների նոր կանոնակարգ, որը դեռևս մեկ տարուց ավելի վաղ ավարտված է, և հասցված գործնական կիրառման աստիճանի: Այսինքն, նոր մեթոդը մշակված էր՝ սկսած սկզբնական կանխավճարից մինչև ծրագրային արժույթները: Դրանից հետո այն քննարկվել էր պետական մի շարք մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, Ազգային Ժողովի վերստուգիչ պալատում, որտեղ այդ կապակցությամբ տրվել են դրական գնահատականներ: Սույն առաջարկության վերջին քննարկումը տեղի է ունեցել սեփականաշնորհման նախարարությունում դեռևս այս տարվա գարնանը: Այդ կապակցությամբ ստեղծվեց մի հանձնաժողով, որը եկավ այն եզրահանգմանը, որ սույն մեթոդը կարելի է կիրառել, բայց քանի որ կառավարությունը ներկայումս մշակում է սեփականաշնորհման նոր հայեցակարգ, ապա այդ առաջարկությունների հարցը կլուծվի այդ հայեցակարգերի քննարկման ընթացքում: Մենք, իհարկե, հեռու ենք այն մտքից, որ մեր առաջարկությունները այլընտրանք չունեն, միակ ճիշտն են: Եվ վերջապես մեզ համար էականը ոչ թե մեր առաջարկությունների ընդունումն է, այլ եղած սխալների ուղղումներն են, կամ էլ մեր հակափաստարկների բերումը: Սակայն միակ հակափաստարկն այն է եղել, որ սեփականաշնորհման գործընթացն արդեն բավականին խորացել է, ընթացել է և կեսից կարգերը փոխելը այնքան էլ նպատակահարմար չէ: Սակայն միաժամանակ կարելի է ասել, որ կառավարությունը վերջերս Ազգային ժողովի քննարկմանն էր ներկայացրել սեփականաշնորհման օրենքի նոր նախագիծը, որտեղ բավականին տարբերություններ կային հին օրենքի նկատմամբ: Սակայն, ցավոք, պետք է ասել, որ նշված այն թերությունները, որ ասացի, պահպանված են օրենքի այս տարբերակում:

Կուսակցության տնտեսագիտական հանձնաժողովի անդամները մասնակցել են նաև մի շարք տնտեսական օրենքների քննարկան, և այդ կապակցությամբ արվել են մի շարք դիտողություններ և առաջարկություններ, մասնավորապես, խոսքը վերաբերում է «Ընկերությունների մասին» օրենքին և «Բյուջետային համակարգի մասին» օրենքին: Հրապարակվել են մի շարք հարցազրույցներ հանրապետության թերթերում:

Հարգելի կուսակիցներ, նկատի ունենալով ժամանակի սղությունը, չենք ծանրանա նեղ մասնագիտական հարցերի շուրջ, սրանով սահմանափակում եմ ելույթս:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի կուսակիցներ, հարգարժան հյուրեր

Հայաստանում բոլոր զարգացող պրոցեսներն այսօր և ապագայում պայմանավորված են ազգային անվտանգության գործընթացների կայունացմամբ:

Այդ իմաստով Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, ի սկզբանե, որպես ռազմավարություն, որդեգրել է ամուր և հզոր պետության գաղափարախոսությունը, որի անհրաժեշտ նախապայմաններից է Հայոց բանակի օրավուր ուժեղացման ճանապարհը: Պատահական չէ, որ մեր կուսակցությունը ամբողջացավ «Անկախության բանակ» ռազմաքաղաքական կառույցի հիմքի վրա: Իրականում առաջինից մեկն էր ՀՀԿ-ն, որ կանխազգաց և ջատագողը եղավ երկրապահ ջոկատների հիմքի վրա հայոց բանակի ստեղծմանը: Այդ մասին հիշատակեց նաև ՊՆ նախարար Վ.Սարգսյանը, որի համար, իրոք, շնորհակալություն եմ հայտնում: Ըստ իս, այսուհետև ևս, մեր քաղաքականության ամենակարևոր խնդիրներից մեկը պետք է լինի ուժային նախարարություններին աջակցելու և բանակի գործընթացներին նպաստելու գաղափարախոսությունը: Բանակի բարոյահոգեբանական կայունությունը, շատ և շատ գործոնների հետ կապված, տեսանելի է նաև երկրապահ կամավորականների գործունեությունից, քանզի այսօրվա հերոսացումների,

հայրենիքի նվիրվածության արգասիքները արձանագրված են երկրապահ ջոկատների սխրանքների հետևանքով: Երկրապահ կամավոր միության երրորդ համագումարը լիովին արդիականացրեց այդ խնդիրները, ու այսուհետև ևս, բացի ներքին սոցիալական խնդիրներից, վերաճելի են ներպետական հոգածության կոնկրետ առաքելությունների: Երկրապահը ներիշխանական, պետական և ազգային խնդիր ունի: Հանրապետականները իրավացիորեն ըմբռնումով մոտ են կանգնած ԵԿՄ-ին: Դրա ակունքները գալիս են պատերազմական տրամադրությունից, և ինչու չէ, մեր տղաները մեծամասամբ երկրապահներ են: Կուսակցական գործունեության ընթացքում առանձնակի դեր ու նշանակություն ունի «Հանրապետություն» միավորման կազմում լինելը: Ըստ իս, դա գալիս է ոչ թե նրանից, որ քաղաքական իրողություններում Հանրապետական կուսակցությունը միայնակ չի կարող գործել, այլ պետության հզորացման ճանապարհին ազգային համաձայնության խնդիրների ուժերի համատեղումը, իր որակական արդյունքը անշուշտ զգալի կդարձնի: Հայաստանում գտնում են, որ այն իրողությունները, որոնք մատնանշված են կուսակցությունների քաղաքական դիրքորոշումներում, բնականաբար, պետք է և պարտադրում է իշխանության լծակներ ունենալու գործոնը: Որոշակի էր, որ մենք նույնպես այդ խնդիրն ունենք: Սակայն ես գտնում եմ, որ պիտի աշխատենք երաշխիքներ ունենալ իշխանության համար պայքարելու: Եվ այն կույր հետևողականությունը, որ իշխանության կամ իշխանավորի դեմ պայքարը այսօր կարող է առաջընթաց ապահովել Հայաստանում՝ շատ երերացող է: Իշխանության համար պայքարելը ինքնանպատակ պիտի չլինի, պետք է ունենաս, ավելի ճիշտ արարելու կարողություն, և եթե ունես՝ ժողովուրդը կգնահատի: Կուսակցության ամբողջ քաղաքականությունը հետևանք է այն գաղափարախոսության, որ ի սկզբանե որդեգրել ենք. ունենալ առանձնակիորեն հզոր, աշխարհի հանրության տեսադաշտում ամրագրված պետություն: Այս իմաստով գնահատելի եմ համարում ուժեղ ազգային արժեքները գնահատող միջազգային մշակույթի խորանը թափանցող հայոց դպրոցի գործը: Իզուր չէ ասված՝ ուժեղ դպրոց, հզոր բանակ: Գտնում եմ, որ այս երկու գործոններն են, որ համարժեքորեն նպաստելու են մեր պետության ազգային անվտանգության խնդիրների լուծմանը: Հայրենասերների սերնդի արարում կունենանք, հայրենապաշտ ազգը զորացնող բանակ: Եվ վերջում, ուզում եմ նշել, որ ես համամիտ եմ այն գաղափարին, որ առաջիկայում էլ Հայաստանի Հանարպետական կուսակցությունը իր քաղաքական դիրքորոշումներում փոփոխություններ չի կարող կրել: Առավել ևս, հենց դրանով է պայմանավորված մեր կուսակցության առանձնահատկությունը: Մենք երկար ճանապարհ ունենք գնալու, և այդ ճանապարհը կանխորոշված է հանուն Ազգի և Պետության հզորացման քաղաքականությամբ:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Մի քանի նկատառումներ խոսված թեմայի մասին, որը Հանրապետական կուսակցությանը շատ հարազատ է. դա Արցախի խնդիրն է: Ակնհայտ է, որ Արցախի հարցի լուծումը Հայաստանի համար, հայության հետագա գոյատեւման համար ունի առանձնակի նշանակություն: Այդ տեսակետից շատ կարևոր են այն մոտեցումները, որոնք ձևավորվում են մեր երկրում, որոնք պիտի հիմք դառնան վաղվա համար: Ինչքան էլ հաճախ պնդեն, որ Արցախի հարցը արդեն լուծվում է, փորձը ցույց է տալիս, որ նման հակամարտությունները երկար ճանապարհ ունեն անցնելու:

Առաջին խնդիրը, որի մասին ցանկանում եմ ասել, դա այն է, որ հաճախ Արցախի մասին խոսելիս նշվում է, որ Հայաստանի այսօրվա տնտեսական դժվարությունները կապված են այն բանի հետ, որ գոյություն ունի Արցախի հարց, որ կա Արցախում ուժեղ բանակ ունենալու անհրաժեշտություն: Ես կարծում եմ, որ սկզբունքորեն դա անընդունելի մոտեցում է, որովհետև ճիշտ հակառակը պետք է լինի:

Արցախի գոյությունը պետք է լիներ այն բարոյահոգեբանական իրավիճակի ստեղծման հիմքը, որը պետք է սխրանքների մղեր և՛ տնտեսական ոլորտում, և՛ մշակույթի ոլորտում, և՛

մյուս ոլորտներում գործող մարդկանց և խմբերին: Այսօր խոսել այդ մասին, որ Արցախը մեզանից խլում է մեր կարողությունը, դա նշանակում է ընդունել վաղվա պարտությունը, որովհետև, ամենայն հավանականությամբ, պատերազմը այլևս չի վերսկսվի: Բայց արդեն սկսվել է այս տարածաշրջանում մի նոր պատերազմ, տնտեսական պատերազմ, որտեղ անպայման պետք է ամրագրվեն և վերջնականապես հաստատագրվեն ռազմաճակատում ձեռք բերված հաջողությունները: Ցավոք, պետք է նշել, որ Հայաստանը այդ պատերազմում առայժմ տանուլ է տալիս: Տնտեսական բարեփոխումները, որի մասին արդեն քանի տարի խոսվում է, այսօր ոչ միայն պտուղներ չեն տալիս, այլև այն նախնական կայունությունը, որը գոյություն ուներ տնտեսության մեջ և որի հիման վրա պետք է ապահովվեր երկրի զարգացումը, այսօր ճաքեր է տալիս: Ցավալի է, բայց դա փաստ է:

Անհրաժեշտ է անպայման նշել, որ տնտեսական վատ վիճակը մեծապես ազդում է նաև ներքաղաքական կյանքի վրա: Մոտ մեկ տարի առաջ, բոլորիդ հայտնի իրադարձությունների արդյունքում, նախագահական ընտրություններից հետո, բավականին սրվեց, մեծացավ լարվածությունը ներքաղաքական կյանքում:

Իհարկե, անցած մեկ տարվա ընթացքում լարվածությունը մարել է, բայց լարվածության օջախները չեն վերացվել, որովհետև մարդկանց կյանքում փոփոխություններ գրեթե չեն եղել:

Այսօր, ցավալիորեն պետք է նշել, որ շատ դեպքերում պետական պաշտոնյա հասկացողությունը հոմանիշ է դարձել կաշառակերի հասկացողության հետ: Ցավալի է, բայց այդպես է: Իսկ նման հիմքով հզոր պետություն, որը տեր կանգնի Արցախին, կառուցել հնարավոր չէ: Մինչդեռ հարևանները, լինի Ադրբեջանը թե Վրաստանը, վերջին մեկ-մեկուկես տարում զգալի քայլեր են արել: Այդ պատճառով անհրաժեշտ է վերանայել այն հիմնարար սկզբունքները, որոնք գործում են և տնտեսության մեջ, և երկրի ներքաղաքական կյանքում, որովհետև լարվածությունը տնտեսության մեջ, ինչպես արդեն ասացի, հանգեցնում է նաև ներքաղաքական լարվածությանը, իսկ այստեղ անհրաժեշտ է քաղաքական համաձայնության ազգային միասնություն:

Ես կարծում եմ, որ պետք է անպայման, շուտափույթ շտկել տնտեսության մեջ խորացած ճգնաժամը: Վերջին մեկ տարվա ընթացքում որոշակի քայլեր արվել են, սակայն անհրաժեշտ է, որ գործընթացներն արագացվեն, հակառակ դեպքում այս ոլորտում ետ մնալը անխուսափելիորեն կարող է սպառնալիք դառնալ Արցախի հարցի համար:

Շնորհակալություն:

ՀՀԿ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՅՈՒՐԻ ԲԱԽՇՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հանրապետականներ, հարգելի հյուրեր,

Հայաստանի անկախությունից հետո մենք ձեզ հետ անցնում ենք դժվարին ճանապարհ, մի ճանապարհ, որ պահանջում է խոհեմություն, զգոնություն, բայց նաև պատվավոր ճանապարհ, որովհետև հենց մեր սերնդի ուսերին է դրված անկախության հաստատումը, պետականության հաստատումը: Այդ ճանապարհին անցնում են նաև Հայաստանի հասարակական, քաղաքական կազմակերպությունները, և այդ կուսակցությունները, լինելով ժողովրդի բազմազան շահերի, տեսակետների, ձգտումների հավաքական ներկայացուցիչները, պաշտպանում են նաև այդ ժողովրդի շահերը, և կարևոր հարց է դառնում, թե տվյալ կուսակցությունը ինչպես է հարաբերվում հասարակության հետ, ինչպես է մատուցում իր ծրագրային դրույթները, արժեքային իր համակարգը, իր գործունեությունն ու գործելակերպը և ինչպիսի հետադարձ կապ գոյություն ունի այստեղ:

Անշուշտ, մենք՝ հանրապետականներս, կարևորում ենք, թե ինչպես ենք հարաբերվել ժողովրդի հետ: Մեր խորին համոզմամբ, ԱԺ-ն ոչ միայն օրենսդիր մարմին է, այլ նաև մեր իշխանության այն թևն է, որտեղ հրապարակային քննարկումների, հարցադրումների, արված դիտողությունների, առաջարկությունների հիման վրա ապահովվում է ընտրող, եթե ավելի լայն բառն օգտագործենք, հասարակություն, պատգամավոր և պատգամավորի կողմից

առաջադրված հարցադրումների միջոցով իշխանության գերագույն մարմիններին արված ըստ էության առաջարկներ: Եվ ինչպիսին կլինեն այդ հարցադրումների, հարցերի պատասխանները՝ մենք գնահատում ենք կատարված աշխատանքով: ԱԺ-ն, մեր խորը համոզմամբ, իրականացնում է հետադարձ դրական կապ, որը կառավարման համակարգում կարևորագույն օղակ է հանդիսանում: Իրոք, ԱԺ-ն է, որ այդ հարցերը կարող է նայել բարձրաձայն, հրապարակային ձևով ներկայացնել, և որից պետք է արվեն հետևություններ:

Հատկանշական է, որ ՀՀԿ համագումարը ծավալվել է մի ժամանակում, երբ ԱԺ-ում քննարկվում են պետբյուջեի հարցերը: Ցավոք, պետք է նշեմ, որ բյուջեի քննարկման ժամանակ որոշ նախարարությունների հատկացումներն ու ծախսերը չէին երևում, թե ինչ կտրվածքով է օգտագործվել պետության զարգացման համար: Մինչդեռ բյուջեի քաղաքականությունը ծրագրային քաղաքականություն պետք է լինի: Բերեմ օրինակներ՝ Գ.Սահակյանը իր ելույթում կանգ առավ կրթության, մասնավորապես, դպրոցի խնդրին: Ես ուզում եմ խոսել գիտության բնագավառում լուրջ բացթողումների մասին, որոնք էապես կանդրադառնան երկրի տնտեսության և բյուջեի աճի բարգավաճմանը: Խոսքս գիտական պոտենցիալի մասին է: Գիտենք, հայտնի պատճառներով, գիտության բնագավառի աշխատողների մի ստվար զանգված այսօր դարձել է գործազուրկ: Մինչդեռ միջպետական պայմանագրերի հիման վրա այս գիտական պոտենցիալը կարող էին գործուղել այլ երկրներ, և ինչու չէ, նաև այս ճանապարհով համալրել բյուջեն: Մի շատ կարևոր հարցադրում, որ մեր նախարարության ծրագրերում չկա:

Արդյունաբերության նախարարության բնագավառում այսօր պարզ չեն, թե որոնք են մեր առաջատար ճյուղերը: Այսօր առողջապահության համակարգում նույնպես ստեղծվել է բարդ իրավիճակ: Մենք նախընտրական ծրագրում, «Հանրապետություն» միավորման շրջանակներում, առաջ ենք քաշել անվճար բուժօգնության մասին ծրագրերը, որոնք, ցավոք, դուրս են մնացել այդ նախարարության ուշադրությունից:

Եվ ինչպես պրն Մարգարյանը նշեց, 1994թ.-ից այսկողմ, միավորման շրջանակներում, մեր խմբակցության աշխատանքները ցանկալի արդյունք չէին ունենում: Ուզում եմ նշել, որ հիմա լուրջ երկխոսություն է տեղի ունենում՝ ԱԺ-կառավարություն: Հարցադրումները դրվում են, հաճախ քննարկվում են և գտնում լուծումներ: Եվ ինչքան էլ այդ հարցադրումները դժգոհություն առաջացնեն գործադիր իշխանությունների մոտ, այնուամենայնիվ, մենք կողմնակից ենք միասնության, մենք կողմնակից ենք կայունության: Սկզբունքային հարցերի մասին մեր դիրքորոշումները արտահայտելու ենք այնպես, որ մեր դիմացինը հասկանա, որ զիջումների մասին խոսք անգամ չի կարող լինել: Պիտի նշեմ, որ կարևորագույն փոփոխություններ է սպասվում դատահիրավական համակարգում, որի օրենսդրական ամբողջ նախապատրաստական աշխատանքներին մասնակցում է կուսակցության պատգամավորական խումբը: Միայն օրենքի գերակայության դեպքում մենք կարող ենք հասնել այնպիսի միջավայրի, որտեղ ամեն մի հայ առանձին և բոլորս միասին կզգանք երջանիկ մեր հայրենիքում: Այն հերոսի կերպարը, որ Աշոտ Նավասարդյանը դրեց մեր կուսակցության հիմքում, մենք կշարունակենք:

Շնորհակալություն: